



Սոցիալական Ապահովությունը ուզում է վստահ լինել, թե ձեր Սոցիալական Ապահովության կամ Լրացուցիչ Ապահովության Եկամտի (SSI) յուրաքանչյուր դիմումի որոշումը ճիշտ լինի: Մենք ուշադիր ուսումնասիրում ենք ձեր տեղեկությունները նախքան ձեր իրավասությունն ու նպաստի գումարը որոշելը:

Երբ որոշում կայացնենք ձեր դիմումի վերաբերյալ, նամակով տեղեկացնում ենք ձեզ մեր որոշումը եւ բացատրում ենք մեր պատճառները: Եթե չհամաձայնվեք մեզ հետ, դուք կարող եք բողոքարկել՝ այսինքն, խնդրել մեզնից որ վերաքննենք ձեր դիմումը:

Ստանալով ձեր բողոքը, մենք քննարկում ենք որոշումը ամբողջությամբ, նույնիսկ այն մասերը, որոնք ձեր օգտին էին: Եթե մեր որոշումը սխալ էր, մենք կը փոխենք այն:

Երբ եւ ինչպես կարող եմ բողոքարկել

Եթե ցանկանում եք բողոքարկել, մեր նամակը ստանալուց հետո 60 օրվա ընթացքում դուք պետք է գրավոր կերպով ներկայացնեք ձեր բողոքը: Մենք ենթադրում ենք, որ դուք նամակը ստանում եք ծրարի վրա եղած ամսաթվից հետո հինգ օրվա ընթացքում՝ բացի եթե դուք ապացուցեք մեզ թե ստացել եք այն ավելի ուշ: Եթե օգնության կարիք ունեք բողոքի ներկայացման հետ, զանգահարեք Սոցիալական Ապահովության ձեր տեղական գրասենյակին:

Եթե Դուք դիմել եք՝ սոցիալական ապահովության անգործունակության կամ SSI-ի նպաստ ստանալու, և Ձեր հայտը բժշկական պատճառներով մերժվել է, կարող եք բողոքարկում պահանջել մեր կայքի հետևյալ էջում.
www.socialsecurity.gov/disability/appeal:

Ո՞րոնք են բողոքարկման մակարդակները

Սովորաբար գոյություն ունեն բողոքարկման չորս մակարդակներ: Դրանք են.

- Վերաքննում.
- Լսում Վարչական Դատավորի կողմից.
- Վերանայում Վերաքննման Դատական Խորհուրդի կողմից, ինչպես նաև
- Դաշնակցային դատարանի վերանայում:

Բողոքարկելու միջոցները բացատրվում են մեր որոշման նամակների մեջ:

Վերաքննում

Ձեր պարագան ամբողջությամբ վերաքննվում է մի անկախ քննիչի կողմից, որը առաջին որոշման չէր մասնակցել: Մենք կուսումնասիրենք առաջին որոշման ընթացքում ներկայացված լրիվ տեղեկությունները, ինչպես նաև բոլոր նոր ներկայացված ապացույցները:

Վերաքննության ընթացքում ձեր ներկայությունը կարելի է, որովհետև մեծ մասամբ վերաքննումը ձեր փաստաթղթերի վերանայումն է: Սակայն, երբ դուք

բողոքարկում եք ձեր հաշմանդամության նպաստների դադարումը ձեր առողջության բարելավման պատճառով, դուք կարող եք հանդիպել Սոցիալական Ապահովության ներկայացուցչի հետ եւ բացատրել, թե ինչու կարծում եք որ տակալին հաշմանդամ եք:

Բողոքարկման գործի քննություն

Եթե Դուք համաձայն չեք վերաքննման որոշմանը, ապա կարող եք քննություն պահանջել: Քննությունն անցկացնում է վարչական գործերով դատավորը, ով չի մասնակցել Ձեր գործի վերաբերյալ նախնական որոշման ընդունմանն ու գործի վերաքննմանը:

Քննությունը սովորաբար անցկացվում է Ձեր տնից առավելագույնը 75 մղոն հեռավորության վրա: Վարչական գործերով դատավորը կժամուցի Ձեզ քննության ժամանակի և վայրի մասին:

Քննությունից առաջ մենք, հավանաբար, կխնդրենք Ձեզ ներկայացնել լրացուցիչ վկայություն և պարզաբանել Ձեր բողոքին վերաբերող տեղեկությունները: Դուք կարող եք ծանոթանալ Ձեր գործի վերաբերյալ առկա տեղեկություններին և ներկայացնել նոր տվյալներ:

Քննության ժամանակ վարչական գործերով դատավորը կհարցաքննի Ձեզ և Ձեր բերած բոլոր վկաներին: Քննությանը տեղեկություններ կարող են տալ նաև այլ վկաներ, ինչպես օրինակ՝ բժշկական փորձագետները կամ զբաղվածության մասնագետները: Դուք և Ձեր ներկայացուցիչը նույնպես կարող եք հարցաքննել վկաներին:

Որոշ դեպքերում մենք կարող ենք Ձեր քննությունն անցկացնել տեսակոնֆերանսի ձևաչափով, այսինքն՝ առանց Ձեր կողմից անձամբ ներկայանալու: Այդ դեպքում մենք Ձեզ նախապես տեղյակ կպահենք: Տեսակոնֆերանսի օգնությամբ մենք կարող ենք քննությունն ավելի հարմարավետ դարձնել Ձեզ համար: Տաճախ տեսակոնֆերանսներն ավելի արագ են նշանակվում, քան անձամբ ներկայանալու պահանջով քննությունները: Դրանից զատ, տեսակոնֆերանսի վայրը կարող է ավելի մոտ լինել Ձեր տանը: Այդ կերպ Ձեզ համար ավելի հեշտ կլինի հոգալ, որ Ձեր վկաներն ու այլ անձինք ուղեկցեն Ձեզ:

Սովորաբար, Ձեր շահերից է բխում ներկայանալ քննությանը (անձամբ, թե՛ տեսակոնֆերանսի ձևաչափով): Դուք և Ձեր ներկայացուցիչը (եթե ունեք ներկայացուցիչ), պետք է գաք քննությանը և պարզաբանեք Ձեր գործի մանրամասները:

Եթե Դուք չեք կարող կամ չեք ցանկանում ներկայանալ քննությանը, ապա պետք է հնարավորինս շուտ գրավոր բացատրություն ուղարկեք մեզ: Եթե վարչական գործերով դատավորը չհամարի, որ Ձեր ներկայությունն անհրաժեշտ է՝ գործի վերաբերյալ որոշում կայացնելու համար, և չպահանջի ներկայանալ, Դուք պարտավոր չեք լինի գալ: Անհրաժեշտության դեպքում մենք կարող ենք նաև փոխել Ձեր քննության ժամանակը կամ վայրը, սակայն դրա համար Դուք պետք է լուրջ պատճառ ներկայացնեք:

Քննությունից հետո դատավորը որոշում կկայացնի՝ հիմնվելով Ձեր գործի մասին եղած տեղեկությունների, այդ թվում Ձեր ներկայացրած նոր տվյալների վրա: Մենք Ձեզ կուղարկենք նամակ և դատավորի որոշման կրկնօրինակը:

Վերաքննման Դատական Խորհուրդ

Եթե դուք համաձայն չեք լսման որոշման հետ, կարող եք դիմել Սոցիալական Ապահովության Վերաքննման Դատական Խորհրդին: Մենք ուրախությամբ կօգնենք ձեզ այս վերանայման խնդրանքը ներկայացնելու:

Վերաքննման Դատական Խորհուրդը ուսումնասիրում է վերանայման բոլոր խնդրանքները: Մակայն այն կարող է մերժել ձեր խնդրանքը, եթե կարծում է որ լսման որոշումը ճիշտ էր: Եթե Վերաքննման Դատական Խորհուրդը որոշում է վերանայել ձեր գործը, այն կայացնում է որոշում ձեր գործի վերաբերյալ կամ էլ վերադարձնում է ձեր գործը Վարչական Դատավորին՝ կրկին վերաքննման համար:

Եթե Վերաքննման Դատական Խորհուրդը մերժում է վերանայելու ձեր խնդրանքը, մենք ձեզ կուղարկենք մերժման նամակ որտեղ բացատրում ենք ձեզ մերժման պատճառները: Եթե Վերաքննման Դատական Խորհուրդը վերանայում է ձեր գործը եւ ինքնուրույն կայացնում է որոշում, մենք կուղարկենք որոշման օրինակը: Եթե Վերաքննման Դատական Խորհուրդը վերադարձնի ձեր գործը Վարչական Դատավորին, մենք դարձյալ ձեզ կուղարկենք նամակ եւ հանձնարարականի օրինակը:

Դաշնակցային Դատարան

Եթե դուք համաձայն չեք Վերաքննման Դատական Խորհրդի որոշման հետ եւ կամ Վերաքննման Դատական Խորհուրդը որոշում է չքննել ձեր դիմումը, դուք կարող եք քաղաքացիական հարցով դաշնակցային դատարան դիմել: Վերաքննման Դատական Խորհրդի որոշման նամակում բացատրում ենք դատարան դիմելու ձևերը:

Արդյո՞ք ես կշարունակեմ նպաստ ստանալ:

Որոշ դեպքերում Դուք կարող եք խնդրել, որ մենք շարունակենք վճարել Ձեր նպաստը՝ քանի դեռ Ձեր բողոքի վերաբերյալ որոշում է ընդունվում: Դուք կարող եք խնդրել, որ նպաստը շարունակի վճարվել, երբ.

- բողոքարկում եք մի որոշում, ըստ որի՝ Դուք այլևս չեք կարող ստանալ սոցիալական ապահովության անգործունակության նպաստ, քանի որ անգործունակ չեք, կամ
- բողոքարկում եք մի որոշում, ըստ որի՝ Դուք այլևս իրավասու չեք SSI-ի վճարումներ ստանալու կամ Ձեր SSI-ի վճարումները պետք է կրճատվեն կամ կասեցվեն:

Եթե ուզում եք որ ձեր նպաստները շարունակվեն, դուք պետք է բողոքը ներկայացնեք մեր նամակը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում: Եթե ձեր բողոքը մերժվում է, դուք հաւանաբար ստիպված կը լինեք ետ վճարել այն գումարները, որոնք դուք իրավասու չէիք ստանալու:

Կարո՞ղ եմ օգնություն ստանալ որեւէ մեկից

Այո: Շատ մարդիկ իրենց Սոցիալական Ապահովության բողոքները ներկայացնում են Սոցիալական Ապահովության Գրասենյակի անվճար օգնությամբ: Մակայն, դուք կարող եք օգնություն ստանալ փաստաբանի, բարեկամի կամ որեւէ այլ անձի կողմից: Ձեզ օգնելու համար ձեր կողմից նշանակված անձը կոչվում է ձեր «ներկայացուցիչ»: Մենք ձեր ներկայացուցիչի հետ կաշխատենք նույնպես, ինչպես ձեզ հետ:

Ձեր ներկայացուցիչը կարող է ձեր Սոցիալական Ապահովության դիմումի եւ բողոքի գործերը մեծամասնությամբ կատարել: Նա եւս կստանա մեր բոլոր որոշումների օրինակները:

Արդյո՞ք որեւէ մեկը կարող է օգնել ինձ:

Ձեր ներկայացուցիչը չի կարող Ձեզանից վարձ պահանջել կամ ընդունել՝ առանց Սոցիալական ապահովությունից նախապես համապատասխան գրավոր համաձայնություն ստանալու: Ներկայացուցիչ ունենալու մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար պահանջեք կամ մեր կայքում գտեք *Ներկայացուցիչ ունենալու Ձեր իրավունքը* (Տրամադրվում թիվ 05-10075-AM) հրապարակումը:

Ինչպես կապ հաստատել Սոցիալական ապահովության վարչության հետ

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մեր հրապարակումների կրկնօրինակները գտնելու համար այցելեք մեր կայքը՝ www.socialsecurity.gov կամ զանգահարեք անվճար հեռախոսահամարով **1-800-772-1213** (խուլ կամ թույլ լսողությամբ անձինք կարող են զանգահարել հեռատիպի համարով՝ **1-800-325-0778**): Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք ստանալու ինքնաշխատ հուշումների մեծամակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թե՛ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր: